ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«16» «10» 2024թ. N 05/6.1/01573-2024

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Լ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
Հասցե՝ ք. Երևան,Նոր Նորք 0090,Գայի պ./Շ/11/20
Էլ. հասցեն՝ FOODCITYAVAN@yandex.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ տիկին Վարդանյան,

Արմավիրի մարզպետի աշխատակազմի և «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 19 օգոստոսի 2024թ. կնքվել է N ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-15 պետական գնման պայմանագիր: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.15 կետերի՝ կողմերը պարտավորվում են կնքել համաձայնագիր մատակարարման ժամանակացույցի և վճարման ժամանակացույցի վերաբերյալ: Արմավիրի մարզպետի աշխատակազմը համաձայնագրի նախագիծը ընկերությանը ծանուցել է 2024թվականի սեպտեմբեր 18-ին,որը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի 2-րդ մասի համաձայն պետք է կնքվեր 15 աշխատանքային օրվա ընթացքում,որը Ձեր կողմից չի կատարվել: Ելնելով վերոգրյալից՝Արմավիրի մարզպետի աշխատակազմը հիմք ընդունելով 2024 թվականի օգոստոսի 19-ին կնքած N ՀՀ ԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/09-15 ծածկագրով գնման պայմանագրի 8.15 կետը, 2024 թվականի հոկտեմբերի 16-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և ընկերության շնորհված 41,91,96 և 101 չափաբաժինները:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ,որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ) մասի և Ձեր կողմից ներկայացված պայմանագրի ապահովման՝2,236,500 (երկու միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և որակավորման ապահովման՝3.354,750 (երեք միլիոն երեք հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարի չափով, տուժանքի համաձայնագրերի 1.6 կետի համաձայն տուժանքի համաձայնագրերը և կից պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Դ.ԴԱՎԹՅԱՆ**

Կատարող՝ ֆինանսական
վարչություն
Վարազդատ Մկրտչյան
Անահիտ Պողոսյան
Հեռ՝ /0237/2-24-12

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com